BULK CAMPAIGN

Close

Status Waiting for notifications

Message

```
Hamaynqi vor xndri lutsumn eq hamarum
arajnahert
1.Koyuxagceri karucum
2.Vorogman canci anckacum
Uxarkeq naxyntrac tarberaky (1 kam 2) 1041
```

Subscribers 2681

Blacklisted Subscribers 15342

Send Date 2016-06-27 16:30:00

DELIVERY PROGRESS



Պայմանագիր № 277

ք. Երևան «18» մայիսի 2016 թ.

«Նիկիտա Մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ **«Ծառայություն մատուցող»**, ի դեմս Գլխավոր տնօրեն Ա.Վ.Յաղջյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նոր Գեղիի Համայնքապետարան», այսուհետ՝ **«Միջնորդ»**, ի դեմս համայնքի ղեկավար Ֆ. Թևոսյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ համատեղ հիշատակման դեպքում՝ ԿՈՂՄԵՐ և յուրաքանչյուրն առանձին որպես ԿՈՂՄ, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԿՈՂՄԵՐԸ պայմանավորվել են, որ Պայմանագրի տեքստում թվարկված բառերի հիշատակման դեպքում, դրանք կունենան հետևյալ նշանակությունները.

1.1. **Օպերատոր**՝ բջջային ռադիոհեռախոսակապի ցանցի օպերատոր, որն ունի համապատասխան արտոնագրեր և թույլտվություններ:

1.2. **Բաժանորդ**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պայմանագրի կողմ՝ բջջային ռադիոհեռախոսակապի ցանցի ծառայությունների մատուցման գծով, որի մյուս կողմ է հանդիսանում **Օպերատորը**:

1.3. **Հաճախորդ՝ Բաժանորդ**, որն իրականացնում է գոնե մեկ **Հարցում Սպասարկման տարածքի** վրա:

1.4. **Ծառայություն**՝ Ծառայություն մատուցողի կողմից սպասարկվող, **Միջնորդի** ինֆորմացիոն-տեղեկատվական կամ զվարճալի ծառայություն, (այսուհետ՝ **Կոնտենտ**), նախատեսված բջջային տերմինալներում օգտագործելու համար, որի ծրագրասարքավորումային ապահովումը մշակված է Ծառայություն մատուցողի կողմից: **Ծառայությունների** ցանկն ու նկարագրությունը բերված է սույն Պայմանագրին կցված Հավելված 1-ում: **Օպերատորի** բաժանորդները **Ծառայության** մուտք ստանում են Ծառայություն մատուցողի **Համալիրի** միջոցով:

1.5. **Բացառիկ իդենտիֆիկատոր**՝ կոնկրետ **Ծառայությունների** տրամադրման սկզբնատառավորման համար բաժանորդի կողմից **Կարճ համարին** ուղարկվող հիմնական բառ կամ այբենարանաթվային ծածկագիր, որը կիրառվում է **Միջնորդի** իդենտիֆիկացիայի (նույնականացման) համար:

1.6. **Համակարգ**՝ Ծառայություն մատուցողի կողմից մշակված ծրագրային web-ինտերֆեյս, որը միջոցներ է պարունակում սույն Պայմանագրով **Միջնորդի** աշխատանքի հաշվառման և վերահսկողության համար:

1.7. **Կարճ համար**՝ **Օպերատորի** ցանցում ներքին համար, տրված **Ծառայությունների** տրամադրման նպատակով և Համակարգի միջոցով ուղղված Համալիրի ուղղությամբ:

1.8. **Հարցում՝ Կարճ համարին** ուղարկվող և **Բաժանորդի** կողմից վճարվող կարճ տեքստային հաղորդագրություն, որը պարունակում է Միջնորդի **Բացառիկ իդենտիֆիկատոր** և արտացոլում է **Բաժանորդի** մտադրությունը՝ օգտագործված լինել Միջնորդի **Ծառայության** կողմից:

1.9. **Հաշվետու ժամանակահատված**՝ մեկ օրացուցային ամիս, որի ընթացքում ԿՈՂՄԵՐԸ կատարել են աշխատանքներ՝ նախատեսված սույն Պայմանագրով և Լրացուցիչ համաձայնագրերով:

1.10. **Հաշվետվություն**՝ Ծառայություն մատուցողի **Համակարգի** տեղեկանք, որը պարունակում է տեղեկատվություն՝ **Հաշվետու ժամանակահատվածում** ստացված **Հաղորդագրությունների** մասին:

1.11. **Տրաֆիկ՝ Հաշվետու ժամանակահատվածում** որոշակի Ծառայության համար ստացված բոլոր **Հարցումների** միագումար քանակությունը:

1.12. **Սպասարկման տարածք՝ սույն Պայմանագրով ծառայությունների մատուցման տարածք** այն է. ՀՀ:

1.13. **Հաշվարկային գումար՝ Տրաֆիկի** արտադրյալը մեկ **SMS-ի** արժեքի վրա, որը նվազեցված է **Օպերատորի** կողմից գանձվող գումարի չափով, և պարգևատրումը, որը հասու է **Կոնտենտի** իրավատիրոջը: Յուրաքանչյուր **Հաշվետու ժամանակահատվածի Հաշվարկային գումարը** հաշվվում է **Համակարգի** և **Օպերատորի** տեղեկատվության հիման վրա:

1.14. **«Հաղորդագրություն»**՝ կարճ տեքստային հաղորդագրություն (SMS), ուղարկված **Օպերատորի** բաժանորդի կողմից որոշակի **Կարճ համարի** վրա՝ **Ծառայության** սկզբնատառավորման համար, և վճարված **Օպերատորի** բաժանորդի կողմից, որը պարունակում է **Բացառիկ անվանում** Ծառայություն մատուցողի հաղորդագրության սկզբում:

1.15. **«Համալիր»**՝ սարքավորումների ծրագրային միջոցների, սերվերների և այլ տեխնիկական բաղկացուցիչների ամբողջություն, որոնք կատարում են ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություն՝ վերջին օգտագործողին **Ծառայությունների** տրամադրման հարցում:

1.16. **«Օպերատորի մասնաբաժին»**՝ դրամային գումար, որը գանձվում է **Օպերատորի** կողմից մեկ **Հաղորդագրության** սպասարկման համար համաձայն Ծառայություն մատուցողի և **Օպերատորի** միջև կնքված պայմանագրի պայմանների: Ընդ որում, Միջնորդը համաձայնվում է, որ **Օպերատորի Մասնաբաժինը** կարող է փոփոխվել Ծառայություն մատուցողի և **Օպերատորի** միջև կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան:

1.17. **«Ելքային»**՝ **Համակարգից** դեպի բաժանորդների բջջային տերմինալներ ուղղված բոլոր ելքային SMS-հաղորդագրությունների գումարային արժեքը, որոնք ուղարկվել են ի պատասխան **Հաղորդագրությունների Հաշվետու ժամանակահատվածում:**

1.18. **«Ինտերնետային գիծ»**՝ կապուղի, որի միջոցով փոխանցվում են կարճ հաղորդագրությունները:

1.19. **«Բջջային կոնտենտ»**՝ մոնոֆոնիկ մեղեդիներ և սև/սպիտակ բացիկներ ու պատկերանշաններ, գունավոր նկարներ, պոլիֆոնիկ մեղեդիներ, ֆոնոգրամմաներ, տեսահոլովակներ և JAVA-հավելվածներ, MP3, տեսատոն, թեմաներ, էկրանի պահնորդներ և այլն:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Ծառայություն մատուցողը պարտավորվում է տրամադրել Միջնորդին սույն Պայմանագրի Հավելված 1-ում նախատեսված ծառայությունները, իսկ միջնորդը ժամանակին վճարել ծառայություն մատուցողին գործողությունների համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ծառայություն մատուցողը պարտավորվում է.

3.1.1. Շուրջօրյա (բացառությամբ տեխնիկական ընդմիջումների) և ամբողջ ծավալով ցուցաբերել տեղեկատվատեխնոլոգիական աջակցություն **Հաճախորդներին** և **Ծառայությունների** տրամադրում:

3.1.2. Տրամադրել Միջնորդին մուտք դեպի **Համակարգ** և ապահովել **Հարցումների** քանակի մոնիտորինգի հնարավորությունը: Իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ուղղված **Համակարգի** լիարժեք գործողությանը:

3.1.3. Իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները, ուղղված Ծառայությունների և ընդհանուր առմամբ Համակարգի լիարժեք գործելուն:

3.1.4. Տեղեկացնել Միջնորդին **Օպերատորի Մասնաբաժնի** փոփոխության մասին այն պահից, երբ այդպիսի փոփոխության մասին ինքը տեղեկացվում է, բայց ոչ ուշ, քան 2 (երկու) աշխատանքային օրում՝ սկսած **Համակարգում** նշված փոփոխությունների մուտքագրման պահից:

3.1.5. Կատարել վճարում՝ Պայմանագրի պայմաններին համապատասխան:

3.1.6. Հաստատել Ծառայությունների առաջընթացին ուղղված Միջնորդի գովազդային արտադրանքի վերջնական ձևն ու նմուշները 3 (երեք) աշխատանքային օրում՝ Կատարողի կողմից նշված նյութերի ստացման օրվանից:

3.1.7. Կատարել **Համալիրի** տեխնիկական սպասարկում: **Համալիրի** տեխնիկական ընդմիջումները չպետք է գերազանցեն շաբաթական 5 ժամը: **Համալիրի** Տեխնիկական սպասարկումը կկատարվի ժամը 4:00-ից մինչև 6:00:

3.2. Միջնորդը պարտավորվում է.

3.2.1. Տրամադրել **Ծառայություններ**՝ օգտագործելով Ծառայություն մատուցողի **Համակարգը:**

3.2.2. Իրականացնել **Հաճախորդների** որոնում և ներգրավում, դրա համար օգտագործելով բոլոր հասանելի հնարավորություններն ու միջոցները:

3.2.3. Որպես **Հաճախորդների** ներգրավման արդյունքների վերահսկողություն՝ օգտագործել **Համակարգը:**

3.2.4. Իրազեկել **Հաճախորդներին Ծառայությունների** տեղեկատվական բովանդակության և հնարավորությունների մասին, այդ թվում ապահովել **Հաճախորդների** ինֆորմացիոն-տեղեկատվական և ծառայությունների սպասարկումը **Սպասարկման տարածքի** վրա հեռախոսով և/կամ էլեկտրոնային փոստով:

3.2.5. Անցկացնել կոնտենտ-ծառայությունների և տեղեկատվության հավաքման շուկայի կոնյունկտուրայի հետազոտությունը, որն անմիջականորեն կապված է **Հաճախորդների** որոնման և **Ծառայությունների** մատուցման հետ, հասցնելով ստացված արդյունքները Ծառայություն մատուցողի իրազեկմանը:

3.2.6. Ինքնուրույն կրել բոլոր ծախսերը՝ կապված Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման հետ:

3.2.7. ժամանակին տրամադրել Ծառայություն մատուցողին փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են Պայմանագրով նախատեսված հաշվարկների կատարման համար:

3.2.8. Ապահովել Ծառայությունների տեղեկատվական համալրումը, կատարելագործել Ծառայությունները և փոփոխել դրանք Ծառայություն մատուցողի պահանջով:

3.2.9. Պահպանել էթիկայի, բարոյական և իրավական նորմերը՝ **Ծառայության** համար գովազդ կամ այլ կոնտենտ ստեղծելու ժամանակ:

3.2.10. Բոլոր մատուցվող Ծառայությունների համար գովազդային նյութերում նախատեսել տեղեկություն գանձվող սակագնի վերաբերյալ:

3.2.11. Իրականացնել **Ծառայությունների** առաջընթացը և ուղեկից նյութերի տարածումը (ինչպես **Ծառայությունների** անբաժան մաս համարվող, այնպես էլ տեղեկատվագովազդային բնույթի) **Սպասարկման տարածքի** վրա՝ Միջնորդի հետ նախապես համաձայնեցված պլանով, կիրառելով միայն այն **Բացառիկ անվանումները**, որոնք Ծառայություն մատուցողը փոխանցել է Միջնորդի օգտագործմանը:

3.2.12. Համաձայնեցնել Ծառայություն մատուցողի հետ **Ծառայությունների** առաջընթացին ուղղված գովազդային արտադրանքի վերջնական ձևն ու նմուշները:

3.2.13. Ըստ Ծառայություն մատուցողի հարցման, տրամադրել լիազորված անձի ստորագրությամբ վավերացված փաստաթղթերի պատճենները, որոնք հաստատում են **Ծառայությունների** տրամադրման օրինականությունը, ոչ ուշ, քան 1 (մեկ) աշխատանքային օրում՝ սկսած այդպիսի հարցում ստանալու պահից:

4. ԳՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

4.1. **Հաճախորդների** որոնման մասով Միջնորդին մատուցված ծառայությունների դիմաց ԿԱՏԱՐՈՂԻ պարգևատրման չափը կախված է ներգրավված **Հաճախորդների** առաջ քաշած **Տրաֆիկից:** Պարգևատրման չափը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր **Ծառայությամբ** ներգրավված **Հաճախորդների** համար՝ Հավելվածում բերված պայմաններին համապատասխան:

4.2. **Հաշվետու ժամանակահատվածի** ավարտի պահից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրում Միջնորդը կազմում է տրամադրված ծառայությունների մասին Ընդունման-հանձնման ակտ՝ Ծառայություն մատուցողի **Համակարգի Հաշվետվության** հիման վրա՝ համաձայն Հավելվածում 2-ում բերված ձևի և ***հաշվի հետ ուղարկում է Ծառայություն մատուցողի ստորագրմանը*** (հնարավոր է փաստաթղթերի ուղարկումը ֆաքսով՝ միաժամանակ ուղարկելով բնօրինակները փոստով): Տրամադրված ծառայությունների մասին Ընդունման-հանձնման ակտը կազմվում է դրամով:

4.3. Պայմանագրի 4.2. կետում նշված փաստաթղթերի բնօրինակներր ստանալուց հետո, 15 (տասնհինգ) բանկային օրվա ընթացքում, Ծառայություն մատուցողը ստորագրում է ստացված փաստաթղթերը և վճարում է Միջնորդին՝ **Հաշվետու ժամանակահատվածի**

համար: Եթե Միջնորդի վիճակագրական տվյալները՝ SMS-հաղորդագրությունների քանակի վերաբերյալ տարբերվում են (չեն համընկնում) **Օպերատորի** կողմից ներկայացված վիճակագրական տվյալներից, ապա փոխադարձ հաշվարկները Միջնորդի և Ծառայություն մատուցողի միջև կատարվում են **Օպերատորի** կողմից ներկայացված վիճակագրական տվյալների հիման վրա:

4.4. Այն դեպքում, եթե 4.3. կետում նշված ժամկետում **Օպերատորի** (**Օպերատորների**) կողմից Ծառայություն մատուցողին չեն փոխանցվել Հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված ծառայությունների գումարը, Ծառայություն մատուցողը պարտավորվում է անմիջապես տեղեկացնել Միջնորդին և համաձայնեցնել Միջնորդի ծառայությունների վճարման նոր ժամկետ և կարգ:

4.5. Այն դեպքում, եթե Միջնորդի վարձատրությունը **Հաշվետու ժամանակահատվածում** կազմում է պակաս, քան 10000 դրամ գումարը, Ծառայություն մատուցողը իրավունք է վերապահում հետաձգել Միջնորդի վարձատրության վճարումը մինչև մյուս **Հաշվետու ժամանակահատվածը:**

4.6. Միջնորդը Ծառայություն Մատուցողին ծառայությունից օգտվելու դեպքում ամսական վճարում է 15000 ՀՀՀ՝ ներառյալ ԱԱՀ:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում 18.05.2016 թ.-ից և գործում է մինչև 18.05.2017 թ: ԿՈՂՄԵՐԻՑ յուրաքանչյուրը իրավասու է լուծել Պայմանագիրը միակողմանի կարգով՝ դրա մասին գրավոր կերպով տեղեկացնելով մյուս ԿՈՂՄԻՆ՝ նվազագույնը մինչև 60 (վաթսուն) օր ժամկետում՝ մինչև լուծարման ենթադրելի օրը: ԿՈՂՄԵՐԸ պարտավորվում են կատարել բոլոր փոխհաշվարկները փաստացի մատուցված ծառայությունների մասով մինչև լուծման օրը:

5.2. ԿՈՂՄԵՐԻՑ մեկի կողմից Պայմանագրի պայմանների ոչ պատշաճ կատարման դեպքում, մյուս կողմն իրավասու է ներկայացնել գրավոր բողոք: Այն դեպքում, եթե ներկայացված բողոքը չքննարկվի և բողոքի պատճառը պահպանվի 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում սկսած բողոքի ներկայացման օրվանից, բողոքատու ԿՈՂՄԸ իրավասու է լուծել Պայմանագիրը միակողմանի կարգով:

5.3. Պայմանագրի գործողության ժամկետի լրանալու կամ դրա վաղաժամկետ լուծելու դեպքում Պայմանագրի դրույթները կիրառվում են այնքան ժամանակ, մինչև ԿՈՂՄԵՐԸ չկատարեն Պայմանագրի գործողության ժամանակ առաջացած բոլոր պարտավորությունները:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

6.1. ԿՈՂՄԵՐԸ պարտավորվում են չհրապարակել Պայմանագրի պայմանները, ինչպես նաև Պայմանագրի կատարման ժամանակ ստացված ցանկացած տեղեկատվություն՝ առանց մյուս ԿՈՂՄԻ գրավոր համաձայնության:

6.2. Ընդունող ԿՈՂՄԸ երաշխավորում է տրամադրող ԿՈՂՄԻՑ ստացված փաստաթղթերի, տեղեկատվության, գիտելիքների ու փորձի գաղտնիությունը: Ընդունող ԿՈՂՄԸ կձեռնարկի բոլոր միջոցառումները այն բանի համար, որպեսզի կանխի փաստաթղթերի և տեղեկատվության լրիվ կամ մասնակի հրապարակումը կամ ծանոթացումը դրանց երրորդ անձանց հետ՝ առանց փոխանցող ԿՈՂՄԻ գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, որոնք կանխապայմանավորված են սույն Պայմանագրով:

6.3. Փոխանցված փաստաթղթերին և տեղեկատվությանը կծանոթանան միայն ընդունող ԿՈՂՄԻ այն անձինք, ովքեր անմիջականորեն կապված են Պայմանագրի պայմանների կատարման հետ՝ ԿՈՂՄԵՐԻ կողմից կանխապայմանավորված չափերով:

6.4. ԿՈՂՄԻ կամ նրա անձնակազմի անդամների կողմից տրամադրված փաստաթղթերի և տեղեկատվության մեջ պարունակվող տեղեկությունների հրապարակման դեպքում ընդունող ԿՈՂՄԸ կփոխհատուցի փոխանցող ԿՈՂՄԻՆ դրա հետ կապված կրած վնասները:

6.5. Գաղտնիության պահպանման հանգամանքները իրենց ուժը պահպանում են նաև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ դրա վաղաժամկետ լուծումից հետո՝ հետագա 5 տարիների ընթացքում:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Սույն Պայմանագրի պայմանների չկատարման համար ԿՈՂՄԵՐԸ պատասխանատվություն են կրում համաձայն ՀՀ գործող օրենսդրության: ԿՈՂՄԸ պատասխանատվություն է կրում

միայն մյուս ԿՈՂՄԻՆ պատճառած ուղղակի վնասների համար: Բաց թողնված օգուտը փոխհատուցման ենթակա չէ:

7.2. Միջնորդը, որպես գովազդատու, պատասխանատվություն է կրում համապատասխան **Ծառայությունների** առաջընթացի համար նրա կողմից օգտագործվող բոլոր գովազդատեղեկատվական նյութերում տրամադրվող տեղեկատվության լրիվության և հավաստիության համար՝ համաձայն գովազդի մասին ՀՀ օրենսդրության:

7.3. Եթե գովազդային նյութերում օգտագործվող բջջային կոնտենտը տրամադրվել է Ծառայություն մատուցողի կողմից, ապա դրա՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության համար պատասխանատվություն է կրում Ծառայություն մատուցողը:

7.4. Այն դեպքում, եթե Ծառայություն մատուցողի կողմից **Ծառայության** վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվության ներկայացման արդյունքում Միջնորդին վնաս է հասցվում, Ծառայություն մատուցողը պարտավորվում է փոխհատուցել Միջնորդին այդպիսի վնասը լրիվ ծավալով այն պայմանով, որ Միջնորդը կներկայացնի Ծառայություն մատուցողին համապատասխան փաստաթղթեր, որոնք կվկայեն Միջնորդին վնաս հասցնելու փաստը:

7.5. Ծառայություն մատուցողը, համաձայն 7.2. կետի, իրավասու է գանձել վնասի կամ տուգանքի գումարները Միջնորդին **Հաշվետու ժամանակահատվածի** համար հասանելիք գումարներից:

7.6. Պայմանագրով իր պարտավորությունների կատարման սահմաններում, Միջնորդը իրավունք ունի կազմակերպել մատակարարման ցանց: Ընդ որում Միջնորդը պատասխանատվություն է կրում Ծառայություն մատուցողի առջև իր մատակարարների գործողությունների համար, ինչպես իր սեփական պարտավորությունների համար:

7.7. Միջնորդը երաշխավորում է, որ նա պատշաճ կերպով օժտված է բոլոր անհրաժեշտ իրավասություններով և գույքային իրավունքներով՝ **Հաճախորդներին Ծառայություններ** տրամադրելու համար:

7.8. **Ծառայություն մատուցողը** երաշխավորում է, որ նա պատշաճ կերպով օժտված է բոլոր անհրաժեշտ իրավասություններով, հեղինակային և գույքային իրավունքներով՝ սույն Պայմանագրով **Ծառայությունների** կոնտենտի համար:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

8.1. ԿՈՂՄԵՐԸ ազատվում են Պայմանագրով պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարման պատասխանատվությունից, եթե այդ չկատարումը անհաղթահարելի ուժի հետևանք է, որը ԿՈՂՄԵՐԸ չէին կարող կանխատեսել կամ կանխել: Այդպիսի հանգամանքների առաջացման մասին ԿՈՂՄԵՐԸ տեղեկացնում են մեկը մյուսին գրավոր կերպով:

8.2. Անհաղթահարելի ուժի հանգամանք են համարվում. պատերազմը, հեղափոխությունը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը կամ նման երևույթները, Պայմանագրի կնքումից հետո ընդունված և Պայմանագրի կատարմանը խոչընդոտող կառավարության որոշումները, պետական մարմինների կարգադրությունները (հրամանագրերը), օրենքները կամ այլ նորմատիվ փաստաթղթերը, էլեկտրասնուցման և կապի խափանումները և այլն:

Տվյալ հանգամանքները պետք է հաստատված լինեն համապատասխան իրավասու մարմինների կողմից:

8.3. Տարաժամկետ, այսինքն վերոհիշյալ հանգամանքների գործողության սկզբի կամ դադարի պահից սկսած ավելի, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացումը զրկում է ԿՈՂՄԻՆ դրանց վրա հիմնվելու հնարավորությունից:

8.4. Եթե անհաղթահարելի ուժի հանգամանքները շարունակվեն մեկ ամսից ավելի, ապա ԿՈՂՄԵՐԻՑ յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել Պայմանագիրը միակողմանի արտադատավարական կարգով, և այդ դեպքում ԿՈՂՄԵՐԻՑ ոչ մեկն իրավունք չունի պահանջել մյուս ԿՈՂՄԻՑ Պայմանագրի լուծմամբ առաջացած վնասների հատուցում: Տվյալ դեպքում, ԿՈՂՄԵՐԻ միջև Պայմանագրի լուծումից հետո առնվազն 10 օրվա ընթացքում կատարվում է փոխադարձ հաշվարկ պարտքերի մասով, որն առաջացել է մինչև ԿՈՂՄԵՐԻՑ մեկի կողմից համապատասխան գրավոր իրազեկման ստացումը:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Պայմանագրի կապակցությամբ բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրերի տեսքով, որոնք պետք է ստորագրված լինեն ԿՈՂՄԵՐԻ լիազորված ներկայացուցիչների կողմից՝ օրենքով հաստատված կարգով:

9.2. Եթե Պայմանագրի դրույթներից որևէ մեկը դառնում է անվավեր կամ անիրագործելի, ապա դրան չի հետևում Պայմանագրի մնացած դրույթների անվավերություն և անիրագործելիություն: Անհրաժեշտության դեպքում ԿՈՂՄԵՐԸ կպայմանավորվեն անվավեր դրույթները վավերականներով փոխելու մասին՝ լավագույնս արտացոլելով ԿՈՂՄԵՐԻ շահերը:

9.3. ՄԻՋՆՈՐԴԸ չի կարող միակողմանի կերպով փոխանցել Պայմանագրով իր իրավունքներն ու պարտավորությունները (լրիվ կամ մասնակի) երրորդ անձանց:

9.4. ԿՈՂՄԵՐԸ պայմանավորվել են լուծել բոլոր վիճելի հարցերը բանակցությունների ճանապարհով:

9.5. Վեճի առաջացման օրվանից սկսած 30 օրվա ընթացքում բանակցությունների ճանապարհով համաձայնության չգալու դեպքում, այդպիսի վեճերը կփոխանցվեն քննության դատարան:

9.6. Պայմանագրում օրերով հաշվարկվող ժամանակահատվածի ցանկացած հիշատակում պետք է դիտվի որպես օրացուցային օրերով հաշվարկվող ժամանակահատված, եթե հատուկ կերպով կանխապայմանավորված չէ, որ ժամանակահատվածը հաշվարկվի աշխատանքային օրերով:

9.7. ԿՈՂՄԵՐԻՑ յուրաքանչյուրը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ մյուս ԿՈՂՄԻ հեղինակությանը վնաս հասցնելու կանխարգելման ուղղությամբ:

9.8. ԿՈՂՄԵՐԸ պարտավոր են անհապաղ տեղեկացնել իրենց փոստային հասցեների, բանկային վավերապայմանների, հեռախոսահամարների, ֆաքսի համարների փոփոխության մասին:

9.9. Նամակները, ծանուցագրերը և այլ փաստաթղթերը, ուղղված մեկ ԿՈՂՄԻՑ մյուս ԿՈՂՄԻՆ այն հասցեով, որը փաստաթղթերի ուղարկման օրվա դրությամբ նշել է երկրորդ ԿՈՂՄԸ որպես նամակագրության համար հասցե, համարվում է ստացված՝ երկրորդ ԿՈՂՄԻ կողմից:

9.10. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, յուրաքանչյուր ԿՈՂՄԻՆ մեկական օրինակ, ընդ որում երկու օրինակն էլ ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծառայություն մատուցող
Լրիվ անվանումը.
«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ

Գտնվելու վայրը.
0070, ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 9
Փոստային հասցեն.
0070, ք. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 410
ՀՎՀՀ՝ 02701579
Հ/հ՝ 1930009490430100 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

էլ.հասցեն՝ info@nikita.am
Հեռ.՝ (+37410) 512073
Ֆաքս.՝ (+37410) 512087

Ծառայություն մատուցող
«ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ

Գլխավոր տնօրեն

.....**/Ա.Կ.Յաղջյան/**
Կ.Տ.

Միջնորդ
Լրիվ անվանումը.
ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքապետարան
Գտնվելու վայրը.
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան 64
Փոստային հասցեն.
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան 64
ՀՎՀՀ՝ 03300707
Հ/Հ՝ 900112104014 , ՀՀՖՆ Կենտրոնական գանձապետարան
էլ.հասցեն՝ norgeghignumner@gmail.com
Հեռ.՝ (+37494) 800943

Միջնորդ
«ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքապետարան»
Համայնքի ղեկավար

.....**/Ֆ. Թևոսյան/**
Կ.Տ.

Հավելված 1
№ 277 Պայմանագրի

«18» մայիսի 2016 թ.

ք. Երևան

Ծառայությունների Ցանկ

2. **Ծառայության** անվանումը՝ «SMS-Gate»:

Ծառայության նկարագրությունը: **Ծառայությունն** ապահովում է բաժանորդների **Հաղորդագրությունների** փոխանցումը **Ծառայության** ադմինիստրատորին, որոնք սկսվում են որոշակի **Բացառիկ անվանումից**:

Ծառայության տրամադրման գործընթացը: Որպեսզի **Հաղորդագրությունը** հասնի ադմինիստրատորին, բաժանորդը պետք է **Հաղորդագրություն** ուղարկի **Կարճ համարին**, որտեղ հարկավոր է նշել **Բացառիկ անվանումը** և արանք թողնելով հաղորդագրության տեքստը: Բաժանորդի կողմից ստացված **Հաղորդագրությանը** համապատասխան **Համակարգը** ձևակերպում է համապատասխան SMS-հաղորդագրություն և ուղարկում է այն բաժանորդի բջջային տերմինալ: Եթե բաժանորդը սխալվել է **Բացառիկ անվանումը** գրելիս, ապա նրան ուղարկվում է **Համակարգի** ստանդարտ պատասխան՝ տեխնիկական աջակցության տեղեկությամբ և հեռախոսահամարով:

Կարճ համար	Կարճ համարի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Միջնորդի վարձատրությունը Օպերատորների բաժանորդներից 1 SMS-ի դիմաց
1041	50 ՀՀԴ	0 ՀՀԴ

«Ելքային»՝ SMS-հաղորդագրությունների գումարային արժեքը, որոնք ուղարկվել են ի պատասխան **Հաղորդագրությունների Հաշվետու ժամանակահատվածում,** կհաշվարկվի միայն այն դեպքում, եթե **Օպերատորը** գանձում կսահմանի այդպիսի SMS-հաղորդագրությունների համար և կհամաձայնեցվի **Կատարողի** հետ առանձին հավելվածով:

Ծառայություն մատուցող
«ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ

Գլխավոր տնօրեն

...../Ա.Կ.Յաղջյան/
Կ.Տ.

Միջնորդ
«ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքապետարան»
Համայնքի ղեկավար

...../Ֆ. Թևոսյան/
Կ.Տ.